ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ

Ազնուապետականներու ակումբ մը – սիրող գեղեցիկ գրքերու – արդէն քանի մը տարի է ի վեր ընկերութիւն մը կազմած է Փարիզի մէջ «Հարիւր Գրասէրները» (Les Cent bibliophiles) *անուան տակ, ընդ նախագահութեամբ գործունեայ և հանճարեղ Էօժէն Ռոտոիկի։*

Իր յանձնարարութեամբ՝ ամէն տարի լոյս կը տեսնէ պատկերազարդ հատոր մը՝ զոր կը նկարազարդէ այժմեան ամենէն ինքնատիպ և ճարտար փորագրողներէն մին. կը հրատարակուի տըպագրական վայելչութեան նրբախնդիր ուշադրութեամբ։ Տպագրեալ գիրքը վաճառքի չէ հանուած, և օրինակները՝ որ ինչ ինչ պատճառներու համար հարիւրէն աւելի չեն կրնար ըլլալ՝ նախանձայուզութեամբ՝ ընկերութեան անդամներուն համար միայն վերապահուած են։

Եթէ անհնար է չափսոսալ՝ որ կատարելապէս արուեստական հրատարակութեանց վայելքը՝ անձնասիրութեամբ սակաւաթիւ անձիքներու միայն սահմանուած կը մնայ, այսուհանդերձ պէտք է խոստովանիլ որ, այդ բացառիկ և ծածուկ նկարագրին շնորհիւ է՝ որ կարելի կ'ըլլայ այդքան սքանչելի ճաշակով զարդարուած գրքերու հրատարակութիւնը։ Աներկիւղ կարող ենք բաղդատել զանիկա՝ այն քանի մը նկարազարդ հրատարակութեանց հետ՝ զորս ի լոյս կ'ընծայէին ԺԸ դարուն Ֆրանսացի երեւակայոտ և կախարդող զարդանկարիչներ։

Հարիւր Գրասէրներուն համար հրատարակուած հատորներուն մէջ՝ ամենէն աւելի յիշատակի արժանի են, իբր իրենց տեսակին մէջ գլուխ գործոցներ՝ Գոտըլէոի «Զարին ծաղիկները» զոր նկարազարդած է Առման Ռասընֆօսէ և Huysmansի *«À rebours»ը զոր երեւակայութեան զարմանալի աւիւնով և չքնաղագիտ փափկութեամբ նկարազարդած է Օկիւստ Լըփէռ։*

Ասոնցմէ ոչ նուազ արժէք ունի, քանի մ'ամսէ ի վեր լոյս տեսած Կապրիէլ Մուրէյի «Le fêtes foraines»ը թէեւ ասիկայ երեւոյթով և նկարագրով անոնցմէ բոլորովին տարբեր է։ Ասոր ճոխ և բազմատեսակ ժանտաջրային նկարները գծագրած է պղնձի վրայ Էտկար Շահին՝ հին և սիրելի ծանօթը Էմփոռիումի ընթերցողներուն։

Երբ կը թղթատենք այս տպագրական տեսակէտով կատարեալ գրքին՝ երկու հարիւրէն աւելի էջերը՝ աչքերնուս առջեւէն կ'անցնին շրջուն եռաժիչտներ, լարախաղաց ըմբշամարտներ, ինքնատիպ տիպարներ տօնայարդար պզտի քաղաքացիներու, մարդկանց, կիներու և տղաքներու փարիզեան ժողովրդէն, և մարմնոյ ամենէն զանազան և բուռն շարժուածքներ և պրկումներ, փարիզեան փողոցներու և հրապարակներու խոլը՝ նիզակախաղեր, ըմբշամարտութեան համար պատրաստուած ցցապատնէշները, լարախաղացներու և ձեռնածուներու վրանները։ Հաչակաւոր և ամենաինքնատիպ հայ արուեստագէտը, ոչ միայն բոլորովին նոր և սքանչելի ապացոյց մը տուած է մարդկային խումբերու դրից և արտայայտութիւններուն նրբագննին դիտող մ'ըլլալուն, և զանոնք վերանորոգելու կարողութեանը՝ իր փորագրողի հմուտ և դիւրաշարժ գրչով, այլ նաեւ իր կենդանութեամբ լի նկարները չարադրած և բաժնած ժամանակ՝ ապացուցած է թէ տպագրեալ էջեր ալ պճնելու համար՝ ունի արտասովոր հանճար և վառվռուն շնորհք։

(Emporium, 1908 *թիւ* 158)

ՎԻԹԹՈՐԻՈՑ ՓԻՔԱ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ. – (*Սիամանթօ*). *Հայորդիները. երրորդ շարք. Փարիզ.* 1908. *Համազգ. տպ. գին Ամերիկայի մէջ* 20 *սէնթ։ Ռուս.* 35 *կոպէկ։ Եւրոպա և ուրիշ վայրեր* 1 *ֆր։*

ՍԱՐԳԻՍ ՄԱՀԱԿԵԱՆ ԼԱԼԱՅԵԱՆՑ. – *Ի՞նչ է հարկաւոր գիւղին. Մոսկուա* 1908. *տպ. Թ. Բարխուդարեանց. գին* 1*. ր։*

ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ. – *Խմբգր. Թիւրքիոյ ընդդիմադիր տարրերը. պրակ. Ա. Ռուսչուք* 1908. *տպ. Գ. Գ. Մազմանեան. գին* 30 *սէնթ։*

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ. – *Լէօ* (*Առաքել Բաբախանեան*) *կենսագրական–գրական ակնարկ նրա* 25–*ամեայ յօբելեանի առթիւ։ Թիֆլիզ* 19.8. *տպ. Ա. Թառումեանի. գին* 10 *կ։*

ՀԱՑԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ. – *Նախապատմական մարդ* 13 *նկարով. Թիֆլիզ* 1908. *տպ. Օր. Ն. Աղանեանի. գին* 15 *կ։*

Ուրարտու և Հայերի Հայրենիքը. Թիֆլիզ 1908. *գին* 10 *կ։*

ԻՎԱՆՈՎ. – *Ըստ Ցայտարարութեան. վօդըւիլ* 1 *գործողութեամբ.* (*թարգմ. Վ. Մանուելեան*). *Ցուեյուած «Ցուշարար»ի. Թիֆլիս* 1908. *տպ. Մ. Տ. Ռոտինեանցի. գին* 40 *կ։*

Dr. V. Torkomian. – Les derniers cas sporadiques de choléra à Constantinople. Rapport lu devant la Société Impériale de médecine. Constantinople Imprimerie Christidis: 1908.

F. Macler. – Catalogue des manuscrits arméniens et géorgiens. Paris. Imprimerie Nationale. 1908.

ՀԱՅՐԵՆԻՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

The Hairenik Pub. Co. Boston mass, 27

= Գին 10 Սր. =

digitised by A.R.A.R.@

ՔՐՈՆԻԿ

— Պ. Դաւիթ Իւզբաշեանց, որ գեղեցիկ դպրութեանց սիրահար մ՚է ու մեկենաս, և որ վերջերս իր ծախքով ի լոյս ընծայեց Պ. Զօպանեանի «Քերթուածները», 2400 րուպլի նուիրած է Պ. Լէօյի՝ որպէսզի կարողանայ իր եռահատոր ընդարձակ Հայոց պատմութիւնը հրատարակել։

— Տումայի հայազգի անդամներէն Պ. Սաղաթիէլեան գեղեցիկ ճառ մը խօսած է Տումայի մէջ՝ ապացուցանելով թէ դիտումնաւոր զրպարտութիւն մ՚է «հայկական սեպարատիզմ»ը, այսինքն Կովկասու մէջ անկախութիւն ձեռք բերելու ձգտումը, որովհետեւ Հայերը՝ որ Կովկասի մէջ 1,400,000 հոգիէ կը բաղկանան՝ այնքան ցրուած խումբերու բաժանեալ են՝ որ ամէն գաւառի մէջ՝ բաց ի Գանձակէն՝ օտարազգիներու համեմատութեամբ փոքրամասնութիւն կը կազմեն։ Ճառախօսը յիշեցուցած է Ռուսաստանի՝ թէ հայ ազգը որպիսի՛ քաջ զօրավարներ ընծայած է իրեն, մի առ անոնց յաղթանակներն համրելով։

— Յառաջիկայ գարնան պիտի սկսի Պաղատի երկաթուղւոյն շինութիւնը, և պիտի աւարտի 7 տարիէն։ — Ֆրանսական նշանաւոր վաճառատուն մը ներկայացուցիչներ ուղարկած է Հայաստանի ամէն կողմ որպէսզի երկրին տնտեսական կացութիւնը քննեն, և իրեն գործունէութեան նոր ասպարէզ մը ծրագրեն։

— Բագրատ Գէորգեան վաճառականը 10,000 րուբլիի նուէրը առաջարկած է Բագուի Կուլտուրական միութեան՝ Քաղաքիկ գիւղի մէջ դպրոց բանալու համար։

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

Շարք մը հատորիկներու, որ կը պարունակեն Թատերերգութիւններ (Drame), կատակերգութիւններ (Comédie) և Զաւեշտներ (Farce), թէ՛ միասեռ և թէ՛ երկսեռ վարժարաններու թատրոններու համար շինուած, և կը ծառայեն միանգամայն տղայոց համար իբրեւ Մրցանակի և ընթերցման գրքեր։

Մինչեւ հիմայ հրատարակուած հատորիկներն են.

1. Ս. Դոմինիկ կղզւոյ վերին. 1905. էջ 62
2. Խաղամոլ. 1906
3. Երեք զաւեշտներ. Ա. Երկու ծայրայեղներ. Բ. Երեք քաջերը. Գ. Գողցուած սագը. 1906
4. Երկու զաւեշտներ. Ա. Երկու Հրացանակիրներ. Բ. Տագնապալից գիշեր մը. 1907
5. Սիմոն Տասնապետը, 1907
6. Ա. Որդիական սէր. - Բ. անգնդակ ատրճանակներ (Զաւեշտ). 1908
7. Ա. Զուիցերիի որբը. - Բ. Վարդագոյն նամակը (Զաւեշտ). 1908. Իւրաքանչիւր հատորիկի գինն է 50 սանթիմ։

Imprimerie Arménienne

S. Lazare **VENISE** (Italie)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԻՏԱԼ-ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ԳԱՆԹԱՐԵԱՆ

Տեսնելով որ իտալերէն գեղեցիկ եւ ճոխ լեզուն ուսանիլ փափաքողաց եւ մանաւորապէս այն ամէն աշակերտաց համար, որոնք պարտաւորեալ են այդ լեզուաւ իրենց ուսմանց ընթացքը կատարել, անհրաժեշտ հարկ է որ քովերնին ոչ շատ ընդարձակ եւ ոչ ալ շատ համառօտ իտալերէն-հայերէն առձեռն բառարան մը ունենան, եւ չունին, ձեռք զարկինք սոյն աշխատութեան։

Բառարանս կը պարունակէ իտալերէն լեզուին գրեթէ բոլոր գործածական բառերն, եւ անոնց զանազան իմաստից եւ նշանակութեանց հայերէնը, որոյ մասին մեծապէս նպաստեցին մեզ Ջախջախեանի, Նորայր Բիւզանդացւոյ եւ Նուպարեանի հրատարակած ընդարձակ բառարաններն, զորոնք հարկ համարեցանք աշխատութեանս ժամանակ միշտ աչքի առջեւ ունենալ։

Կը յուսանք թէ բառարանս օգտակարապէս իր նպատակին ծառայէ, եւ այն ամէն անձանց, որոնց համար իտալերէն գիտնալն յատկապէս կարեւոր է եւ շահաւոր, համեմատաբար աւելի քիչ ժամանակի մէջ այդ լեզուն ուսանելու դիւրութիւն ընծայէ։

= ԳԻՆՆ Է ՖՐ. 5 =

Imprimerie Arménienne - S. Lazare VENISE (*Italie*)

digitised by A.R.A.R.@